## ԴԻՄՈՒՄ

**Բոննում երեքշաբաթյա հանգիստ անցկացնելու**
**եվ Կարդինալ-Ֆրինգս Գիմնազիա հաճախելու համար**

**ՄԵՆՔ**

Կարդինալ-Ֆրինգս Գիմնազիան ենք, Քյոլնի պատրիարքարանի դպրոցը՝ ավելի քան 1000 դպրոցականներով: Մեր դպրոցը գտնվում է Լյուդվիգ վան Բեթհովենի ծննդավայր Բոննում, Հռենոսի ափին: Բոննը երկար տարիներ Գերմանիայի մայրաքաղաքն էր, իսկ այսօր ժամանակակից արդյունաբերական կենտրոն է: Բոննից ոչ հեռու է գտնվում միլիոնանոց քաղաք Քյոլնը՝ իր աշխարհահռչակ Քյոլնի Տաճարով:

Երկար տարիներ մենք ջերմ  բարեկամական կապեր ենք պահպանում Հայաստանի հետ: Մեր դպրոցական ծրագրի շրջանակներում մենք կարող ենք շատ հայկական դպրոցների ֆինանսապես աջակցել: Մեզ համար կարևոր է նաև փոխադարձ այցելությունները ու մեր հայ բարեկամների հետ միասին լինելը:

Հաճույքով կրկին հրավիրում ենք հայ աշակերտներին ու աշակերտուհիներին՝ երեք շաբաթ մեզ հետ միասին անցկացնելու: Նրանք ապրելու են մեր դպրոցի ընտանիքներում, մասնակցելու են դասերին և սովորելու են մեր մարզը ճանաչել: Հյուրընկալող ընտանիքների հետ պայմանավորվածության ծեռքբերման ու ինքնաթիռի տոմսերի մասին հոգում ենք մենք:

## ԴՈՒ

- արդեն ունես գերմաներենի լավ գիտելիքներ և կարող ես շփվել գերմաներենով
- հետաքրքրված ես այլ երկրներով, մարդկանցով և մշակույթներով
- հետաքրքրված ես գերմաներեն լեզվով և մշակույթով
- ցանկանում ես երեք շաբաթով գերմանական ընտանիքում ապրել
- ցանկանում ես երեք շաբաթ մեզ մոտ դպրոցի դասերին մասնակցել

## ՈՒՐԵՄՆ ԴՈՒ ՊԵՏՔ Է ԴԻՄԵՍ

Մեզ ուղղված քո դիմումի մեջ պետք է լինի.

- Անուն, ազգանուն, ծննդյան օր, ամիս, թիվ, հասցե և հեռախոսի համար
- Քո դպրոցի և քո գերմաներենի ուսուցչի անունը, հասցեն և հեռախոսի համարը
- Եթե հնարավոր է, էլեկտրոնային փոստի հասցեն (քոնը կամ քո ընկերոջը), որով կարելի է քեզ հետ կապ պահպանել
- Քո կողմից կարճ մի գրություն հետևյալ թեմայով.
  “Ինչ ակնկալիք ունեմ Գերմանիա իմ այցելությունից”.

մինչև 30.09.2009 Քո դիմումը ուղարկիր տիկին Բանդաուին հետևյալ հասցեով,

Եվրոպակա ակադեմիա
տիկին Սուզաննա Բանդաու
Դավիթ Անհաղթի փ. 10,
0045 Երևան (Ջեյթուն)
հեռ. 010-24 13 06, ծեռքի 093-35 33 70
էլ.փոստ: bandau@tbilissi.goethe.org

Տիկին Ս. Բանդաուն Քո դիմումը Քո փաստաթղթերի հետ մեզ կուղարկի, իսկ մենք Քեզ հետագայում տեղեկություն կուղարկենք: